

«ՂՈՍ-ՅԱՅԱՍԱՆ» ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԸ

1999 թ. մարտի 24-ին Վատիկանի առաքելական գրադարանի Սիքստինյան դահլիճում բացվեց «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսը, որի բացման արարողությունը ներկա էին Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյանը, Գարեգին Սուրենյան Ամենայն Հայոց Հայրապետը և Հռոմի Հովհաննես-Պողոս երկրորդ պապը:

Ցուցահանդեսում ընգրկված նմուշները ընտրված էին աշխարհի 5 տասնյակից ավելի թանգարաններից ու ձեռագրատներից: Ցուցադրված շատ արժեքավոր նմուշներ տրամադրվել էին իտալական դիվանների ու թանգարանների կողմից, որոնք գրեթե ծանոթ չէին մեր դիտական հասարակությանը: Դրանցից առավել ուշագրավ էին Լևոն I թագավորի չորս ոսկեկնիք նամակները Ինոկենտիոս III պապին, որոնք պահվում են Վատիկանի Գաղտնի դիվանում: Հայոց թագավորների Եվրոպա ուղղած նամակները Սիսի արքունիքում լատիներեն թարգմանվելուց հետո հաստատվում էին արքայական ոսկե կնիքով: Հայերեն բնագրերը պահվում էին արքունի դիվաններում, իսկ կնիքով տմբագրվածները ուղարկվում էին Եվրոպա: Չափազանց հազվագյուտ երևույթ է, երբ հենց արքայական ոսկեկնիք նամակը պահպանվում է, քանի որ շատ հաճախ այդ կնիքները գողացված ու թալանված են լինում: Նամակները, որ հիմնականում ամսաթիվ չունեն և գրված են 1204-1216 թվականների ընթացքում, վերաբերում են Անտիոքի աթոռի հետ կապված խնդիրներին, Տարսուսի և Մամիստրայի լատին և հույն եկեղեցիների վարած բանադրանքի համարձակ քաղաքականությունը, ինչպես նաև այլ քաղաքական հարցերի:

Կիլիկյան արքաների կողմից տրված առևտրական արտոնագրերի հայերեն չորս բնօրինակներից երկուսը տեղ էին գտել ցուցադրությունում: Սրանցից առաջինը Լևոն II թագավորի կողմից ջենովացի վաճառականներին 1288 թ. տրված առևտրական արտոնագիրն է, իսկ մյուսը՝ Լևոն IV թագավորի կողմից 1331 թ. սիցիլիացիներին տրված արտոնադիրը, որոնք ցուցահանդեսին էին տրամադրվել Ջենովայի և Սևիլիայի կենտրոնական արխիվների կողմից: Հիշենք նաև, որ մյուս երկու արտոնագրերը տրված են եղել Մոնպելյեի վաճառականներին և պահվում են Մոնպելյեի քաղաքային դիվանում:

Ցուցադրության արժեքավոր նմուշների շարքում նշելի է նաև 1246 թ. Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի ինքնագիր հայերեն նամակը Ինոկենտիոս IV պապին, ուր կաթողիկոսը ներկայացնում է Հայ առաքելական եկեղեցու հավատո գավանանքի էությունը՝ պապի խնդրանքով, որն այս նպատակով նրա մոտ էր ուղարկել Ֆրանցիսկյան հոգևորական Դոմինիկ Արագոնացուն: Այս փաստաթուղթը ևս պահվում է Վատիկանի Գաղտնի դիվանում:

Հետաքրքիր էր դիտել նաև XVI դարից մեզ հասած և Թուրինի քաղաքային գիվանում պահվող Լուսինյանների տոհմածառը, որը պատմական և գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում:

Տոհմածառերի շարքում պիտի հիշել նաև XVII դարի հայտնի ջուղայեցի առևտրական ընտանիքներից մեկի՝ Գերաքյան ընտանիքի տոհմածառը, որը ճանաչողական և գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում, արված է մագաղաթի վրա՝ դուռնավոր նկարազարդումներով: Այն ցուցահանդես էր բերվել Լիվոռնոյից: Ֆլորենցիայի Բարգելլոյի ազգային թանգարանը ցուցադրության էր ներկայացրել Գրիգոր Գերաք Միրիմանի արծաթե մեդալը, որը նա կրել է իր արևելյան հագուստի վրա:

Ցուցահանդեսի այցելուների հատուկ ուշադրությանն էր արժանանում 990 թվականի մի փաստաթուղթ, որը վկայում է իտալական Բարի քաղաքում հայերի ներկայության, նրանց կողմից հողակտորի գնման ձևակերպումների մասին: Ինչպես ցույց են տալիս հետագա տարիների փաստաթղթերը, այնտեղ փաստվում է նաև Աուրը Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնադրման իրողությունը:

Ցուցահանդեսի հետաքրքիր և արժեքավոր նմուշներից էր նաև Միլանի Ամբրոջյան գրադարանի տրամագրած ձեռագիրը՝ XIV-XV. դդ. պատկանող Աուրը Պողոսի հնգալեզու թուղթը՝ եթովպերեն, ասորերեն, ղպտերեն, արաբերեն և հայերեն:

Ցուցանմուշների մեջ տպավորիչ էր Բոլոնիայի համալսարանի ֆոնդերից հայտնաբերված «Հայկական եկեղեցու աշխարհագրական քարտեզը», որն իրականացվել է 1691 թվականին Կ. Պոլսում՝ XVII դարի հայ հայտնի մտավորական Երեմիա Քյոմուրճյանի կողմից բոլոնիացի կոմս, գեսպան Լուիջի Ֆերնանդո Մարսիլիի պատվերով: Հայ հոգևոր կենտրոններն ու սրբավայրերը այստեղ գծված են մանրանկարների ձևով՝ ավելի քան 700 բացատրաբեր ներկայացնում են հայ եկեղեցու պատրիարքարաններն ու թեմերը, հիմնական վանքերն ու եկեղեցիները: Արքավայրերի անվանումները շրջանակված են գունային տարբեր երանգներով՝ ըստ հոգևոր կարգի և ուղեկցվում են այդ վայրերում պահվող սրբերի, նրանց մասունքների, մարտիրոսների ու զանազան հրաշքների մասին տեղեկություններով: Քարտեզը հայտնաբերվել է 1991 թվականին Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Գաբրիելա Ուլուհոջյանի կողմից և շարունակում է մնալ հայագետների ուշադրության կենտրոնում:

Ցուցահանդեսում ներկայացված ցուցանմուշների լուսանկարները և հայ-հռոմեական ավելի քան երկհազարամյա փոխհարաբերությունների պատմությունը լուսաբանող հոգվածներ ամփոփված են իտալերեն և ֆրանսերեն լեզուներով տպագրված ժողովածուի մեջ, որը հրատարակվել է Վաչե և Թամար Մանուկյան հիմնադրամի և Գալուստ Գյուլբենկյան հաստատության հայկական բաժանմունքի հովանավորությամբ<sup>1</sup>:

Ըստ բաժինների ժողովածուն ունի հետևյալ բովանդակությունը.

1. Ժողովածուի նախաբանում ներկայացված է Պողոսեոսի «Աշխարհագրության» մեջ Վատիկանի Առաքելական գրադարանում (Urb. Gr.

<sup>1</sup> "Roma-Armenia", sous la direction de Claude Mutafian. Roma: Edizioni De Luca, 1999, 363 p.

82, ff. 93-94) պահպանող քարտեզի ամենավաղ արտագրությունը (XIII դար): Վատիկանի գրադարանում է պահպանվում (Urb. Lat. 277, ff. 72-73) նույն քարտեզի 1472 թ. լատիներեն մագաղաթյա մի արտագրություն՝ Զակոբո Անջելիի թարգմանությունը, որտեղ ևս ներկայացված է Մեծ Հայքը: Առաջին քարտեզի պատճենն է XV դարում հավանաբար Ֆլորենցիայում արված (Vat. Lat. 5698, ff. 29-30) մագաղաթյա քարտեզը, ուր Փոքր Ասիայի արևելյան հատվածը անվանվում է Փոքր Հայք, իսկ նրանից արևելք ընկած մասը՝ «Maioris Armenie Pars» կամ «Մեծ Հայքի գավառ»: Ժամանակագրական կարգով հաջորդը ջենովացի քարտեզագիր Բատիստա Անյեզեի 1542 թ. 11 քարտեզներ պարունակող ատլասի 10-րդ քարտեզն է, ուր ներկայացված են Մեծ և Փոքր Հայքերը: Ներկայացված է նաև 1570 թ. Վենետիկում պորտուգալացի քարտեզագրի կողմից իրականացված նավարկության քարտեզը:

2. Նախաքրիստոնեական Հայաստանը (մինչև III դար):

Իտալացի ճանաչված հնագետ պատմաբան Զուստո Տրահինան «Հայաստանի՝ Հռոմի հետ առնչությունների զրկագները (մ.թ.ա. II – մ.թ. III դարեր)» հոդվածում անդրադառնում է Հայաստան-Հռոմ անդրանիկ առնչությունների նախապատմությանն ու հանգամանքներին, հայկական թագավորության ծննդին, պատմագրության մեջ այս շրջանի հարաբերություններին տրված զանազան մեկնաբանումներին: Ռուբեն Վարզանյանը (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ) դրամադիտական հարուստ նյութի օգտագործմամբ անդրադարձել է «Արքայից արքա» տիտղոսի ընկալմանն ու շահարկմանը պարթևա-հայ-հռոմեական քաղաքական հարաբերությունների ոլորտում:

3. Քրիստոնեությունը որպես պետական կրոն. ակունքները (IV-V դարեր):

Ռուբեն Մանասերյանը (ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ) իր հոդվածում անդրադառնում է Հայոց արքաների և հռոմեական կայսրերի միջև դիվանագիտական առնչություններին I-IV դարերում և այս տեսանկյունից քրիստոնեության ընդունման գրգռվածություններին: Հատկանշական է նաև Ժան-Պիեռ Մահեի «Քրիստոնյա Հայաստանի առաջին դարը» հոդվածը, ուր հեղինակը բազմակողմանիորեն անդրադառնում է այս շրջանի պատմագիտությանն ու աստվածաբանությանը՝ քրիստոնեության ընդունումը դիտարկելով քաղաքական, ինչպես նաև պետականության շարունակականության տեսանկյունից: Վալենտինա Կալցոլարին (Ժնևի համալսարան) «Հայ սրբերը և հռոմեացի կայսրերը. հերոսները կոնֆլիկտի մեջ» վերնագրով հոդվածում անդրադառնում է Հայոց Ներսես պատրիարքի և Հռոմի Վաղես կայսրի հարաբերություններին: Հեղինակը Փավստոս Բուզանդի «Պատմությունը» համադրելով հռոմեական, բյուզանդական և այլ աղբյուրների հետ, որոշ անախրոնիզմներ է նկատում Բուզանդի մոտ: Հայոց գրերի ստեղծմանը, Հայոց ոսկեդարին է նվիրված Գաբրիելյա Ուլուհոջյանի (Բոլոնիա) հոդվածը: Այս ծավալուն թեման հնարավորինս սպառելու նպատակով հեղինակը այն դիտարկել է տարբեր տեսանկյուններից՝ ներկայացնելով նախ այբուբենի ստեղծումը և այն ժամանակաշրջանն ու գաղափարախոսությունը, որի պայմաններում իրադրծվեց այդ դյու-

տը, ապա անդրադառնում է թարգմանչական ավելի քան հարուստ ավանդույթին: Խոսելով պատմագիտության սկզբնավորման մասին՝ նա արձանագրում է այն իրողությունը, որ հայ պատմագրությունը դարեր շարունակ մնաց ամենածաղկող գրական ժանրը, իսկ Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի պայքարը արտացոլվում է Հայոց Ոսկեդարի յուրաքանչյուր ստեղծագործության մեջ: Հայոց Ոսկեդարը, ըստ Գ. Ուլուհոջյանի, գարձավ հայ ազգային ինքնագիտակցության հաստատման առհավատչյան հաջորդ դարերի ու գրանց բերած փորձությունների ընթացքում: Իր լեզվի, հավատի, քաղաքակրթության հետ կապի շնորհիվ հայ ժողովուրդը կարողացավ դիմադրել բյուզանդական, արաբական, սելջուկյան, մոնղոլական, հետո նաև օսմանյան ծանր ճնշումներին: Արևելյան եկեղեցիների պատմության մասնագետ Կլաուդիո Գուլջերոտտին «Վարդան Մամիկոնյանը և մարտիրոսության գաղափարախոսությունը» հոդվածում նկատում է, որ չնայած Վարդանանց պատերազմը և Վարդան Մամիկոնյանի կերպարի հետ կապված իրադարձությունները շատ վաղ անցյալում են կատարվել, սակայն այնպես են արմատացած հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության մեջ, որ դրանք կարելի է որակել որպես «մարտիրոսական իդեոլոգիա»: Հեղինակը համոզված է, որ այդ գաղափարախոսության ձևավորման գործում քիչ դեր չի խաղացել ժամանակի պատմիչների (Եղիշե, Փարպեցի) մոտեցումը այս խնդրին, որոնք պատմական փաստերի և կրոնական դաստիարակության ֆոնի վրա կարողացել են այս իրողությունների հիմքում դնել հիշյալ գաղափարախոսության սաղմերը: Հեղինակը Եղիշեին հասկանում է ոչ թե որպես երկու կրոնների հակամարտության պատմադիր, այլ քրիստոնեության՝ որպես ի վերուստ տրված «օրենսդրության» պաշտպան: Այս լույսի ներքո հեղինակը քննարկում է «ուխտի» հասկացությունը, «Մահ իմացեալ անմահութիւն է» խոսքերը և այլն:

#### 4. Հայաստանը և արևելահռոմեական կայսրությունը:

Այս րաժնում ժերար Դեդեյանը (Մոնպելյե) «Հայերը Բյուզանդական կայսրությունում» (IV-XI դդ.) հոդվածում մանրամասն խոսում է Հայաստանի և Բյուզանդիայի հարաբերությունների ամենավաղ ժամանակների մասին (284-582 թթ.), Փոքր Հայքը դիտարկելով որպես էթնիկական մշակութային փոխհարաբերությունների օրրան: Հեղինակն անդրադառնում է եկեղեցու հայրերի վկայարանություններին, նշում է այն փաստը, որ Արևմուտքում քրիստոնեության տարածման գործում որոշակի դեր խաղացած և արևմտյան ժողովուրդների կողմից մինչ այժմ պաշտվող հայ սրբերի մի մասը (Ֆլորենցիայի ս. Մինիատոն, ս. Գրեգուար դը Պիտիվիեն, Գանտի ս. Մակարիոսը և այլք) Արևմուտք էր դալիս հենց Փոքր Հայքից: Այնուհետև անդրադառնալով հետագա դարերին (582-842 թթ.), հեղինակը խոսում է Բյուզանդական կայսրության և Հայաստանի քաղաքական ապակայունացման, այս պատճառով նաև հայկական գաղթների մասին: Հետաքրքիր լուսարանումներ ենք գտնում հայերի կողմից բնակեցված տարածքների ուսումնասիրության ուղղությամբ: Հոդվածում խոսվում է նաև դեպի Բյուզանդիայի տիրապետող դասակարգ հայերի մուտքի, դրա պատճառների, այս առումով հայոց հողեր-մշակութային անխուսափելի ազդեցության մասին բյուզանդական քաղաքակրթության վրա: Քննության են

ենթարկվում 842-1028 թթ. ընթացքում Բյուզանդիայի հայազգի կայսրերի, հայկական դինաստիաների և Բյուզանդիայի քաղաքական կյանքում հայ ավագանու խաղացած դերի հարցերը:

5. Պապականության հետ առնչությունները և առաջին խաչակիրները (VII-XII դարեր):

Հ. Պողոս Լևոն Զեքիյանը «Քրիստոնեական աստվածաբանության գագաթները. էկոմենիկ սինթեզը Հայկական Կիլիկիայում» հոդվածում անդրադառնում է հայոց պատմության և մշակույթի մեջ աստվածաբանության խաղացած դերին: Հեղինակը հատկապես անդրադառնում է «հայոց քրիստոնեական հավատքի էթնիկ երանգավորմանը»՝ վստահ լինելով, որ արևելյան մյուս եկեղեցիների համեմատությամբ հայոց եկեղեցու աղբյուրին նկարագրերը ավելի քան ընդգծված էր: Ըստ հեղինակի, այն առկա էր ժողովրդի կյանքում, մտածողության մեջ՝ դառնալով նրա մշակույթի կամ քաղաքակրթության աստվածաբանությունը: Այս առումով Հ. Զեքիյանը անդրադառնում է հայոց եկեղեցու հարաբերություններին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Ազատ Բողոյանը (ՀՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտ) «Արծաթե դարի» մշակույթը և Հոռմը» (XI դ. վերջ–XIII դ. սկիզբ) հոդվածում անդրադառնում է Կիլիկիայում և Հյուսիսային Արիայում հայկական պետականության ստեղծման նախադրյալներին, Հայաստանի ներքին և արտաքին, քաղաքական և եկեղեցական կյանքում, ինչպես և ժողովրդի ինքնագիտակցության մեջ կատարված փոփոխություններին: Հայրապետ Մարգարյանը «Հայաստանը XII-XIV դդ. կեսերին» հոդվածում անդրադառնալով նշված դարաշրջանում Իտալիայի հետ հայոց հարաբերությունների պատմությանը, ցույց է տալիս, որ այդ հարաբերությունները որքան օրինաչափ, նույնքան բազմազան էին իրենց բնույթով: Հայաստանի աշխարհաքաղաքական անբարենպաստ պայմաններով են բացատրվում այն պատճառները, որոնք ստիպեցին Հայությանը իր դեմքն ուղղել դեպի Իտալիա: Դա որքան պատճառաբանված էր խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու հեռանկարով, նույնքան էլ Արևմուտքի և մոնղոլների միջև համաձայնություն ձեռք բերելու հեռանկարով՝ Եղիպտոսի սուլթանության դեմ պայքարելու համար: Քաղաքական հեռանկարները հետագայում փոխարինվեցին առևտրատնտեսական հարաբերություններով, որոնց զարգացման գործում քիչ գեր չխաղացին եվրոպացի դրանց մեջ նաև իտալացի միսիոներները:

6. Հայաստանը կոսմոպոլիտ (XIII-XIV դարեր):

Կլոդ-Արմեն Մուլթաֆյանը «Հոռմեական եկեղեցու մուտքը հայոց մեջ (1200-1350 թթ.)» հոդվածում անդրադառնում է Կիլիկիայում հոռմեական եկեղեցու գործունեության ակունքներին: Հեղինակի կարծիքով Կիլիկիայի իշխանությունները միտք ունեին հոռմեական եկեղեցու ներկայությունը օգտագործել Անտիոքի աթոռի վրա ճնշում գործադրելու նպատակով: Հեղինակն այնուհետև անդրադառնում է Կիլիկիայում Ֆրանցիսկյան ու դոմինիկյան միսիոներների ակունքներին՝ առաջին միսիոներների դործունեությունը, Հեթում II-ի և Ֆրանցիսկյանների հարաբերություններին, ինչպես նաև հետհեթումյան շրջանում՝ Ավինյոնի պապականության քաղաքականությանն ու լատին եկեղեցու ներթափանցմանը Մեծ Հայք

(դոմինիկյաններ): Մատենադարանի գիտաշխատող Լիլիթ Զաքարյանն իր հոդվածում լուսաբանում է XIV դարի հակաունիթոր մի մանրանկարչի՝ Ավագի գործունեությունը, ինչպես նաև XIII-XIV դդ. հայ-իտալական մշակութային փոխառնչությունները: Լուսերա Բալետոն (Ջենովա) «Հայ-իտալական առետուրը XIII-XV դդ.» հոդվածում անդրադառնում է Կիլիկիայի հայկական քաղաքների և Ջենովայի ու Վենետիկի ունեցած առևտրական կապերին: Նա քննարկում է այն արտոնությունները, որոնցից օգտվում էին վենետիկցիները և արևմուտքից Կիլիկիայի քաղաքները եկած վաճառականները, անդրադառնում հայոց արքաների տված և վերահաստատած հրովարտականներին (1245, 1261, 1271, 1307, 1321 1333 թթ.): Հանգամանորեն քննարկում է այն եվրոպական փաստաթղթերը, որոնք վերաբերում են հատկապես Այասի խաղացած դերին Արևելք-Արևմուտք միջազգային առևտրական կապերի մեջ: Հեղինակը, հանդիպելով նույն անուններին թե՛ կիլիկական, թե՛ ջենովական դիվաններում, թե՛ Այասի հետ կապված փաստաթղթերում, համոզված է, որ նույնիսկ այն ժամանակ, երբ Կիլիկյան պետությունը որպես այդպիսին դադարել էր դոյություն ունենալուց, առևտրական պայմանագրերը, շնորհիվ Կիպրոսի միջոցով ձեռք բերված համաձայնագրերի, երկար ժամանակ մնում էին ուժի մեջ: Պատրիկ Տոնապետյանը (Փարիզ) մանրամասն անդրադառնում է հայերի խաղացած դերին Ղրիմում՝ «Ջենովական դարաշրջանում» դիտարկելով հայ գաղթօջախի (Թեոդոսիա, Սուրբաթ, Խազարաթ) պատմությունը, նրա ճարտարապետական ժառանգությունը:

#### 7. Հայերը միջնադարյան Իտալիայում (VI-XV դարեր):

Անտոնիո Կաբելեն (Բոլոնիայի համալսարան) իր «Հայերը և արևելցիները բյուզանդական Ազրիատիկում» հոդվածում, օգտագործելով տեղի վիճագրական հարուստ նյութը, անդրադառնում է այն փաստին, որ VI-X դարերում այստեղ առկա է հայկական տարրը հանձինս զինվորականների, պաշտոնյաների, կղերականների, ինչպես նաև Արևելքից եկած վաճառականների, որոնք հիմնականում հունախոս էին: Մարիա Միրելա դե Մարտինի իր «Հայ ճանապարհորդների հետքերը հարավային Իտալիայում» հոդվածում քննում է ճարտարապետական այն հուշարձանները, որոնք փաստում են X-XIII դարերում հայերի ներկայությունը Իտալիայի հարավային մերձծովյան շրջաններում: Նա մատնանշում է, որ Բարիում հայեր եղել են դեռ Հուստինիանոսի ժամանակաշրջանում: Նեապոլում և Մոնտեվերդինում եղել են հայկական ծագում ունեցող բարսեղյան միաբանությունների ներկայացուցիչ կղերականներ: Կան փոքրիկ բնակավայրեր, որոնց անունները բնութագրական են հայերին (Խաչեր, Երեք Խաչ, Ռոմեոյի Խաչ, Սուրբ Խաչ): Նա թվարկում է մի շարք բնակավայրեր, որոնց անվան մեջ իսկ երևում է հայկական ծագումը՝ Սանտա Մարիա դելլե Արմենի, Արմո Կապո գելլե Արմենի և այլն: Նման հիշատակություններ կարելի է թվարկել մի շարք այլ բնակավայրերից, որոնք ընկած են Տարենտեից մինչ Նարդո ճանապարհի վրա: Սրանց մեջ հատկանշական է հատկապես Մատերա բնակավայրը, որի Սանտա Մարիա դելլե Արմենի եկեղեցին թվագրվում է VIII դարով: Իսկ Նեապոլի որոշ թաղեր մինչ այսօր պահպանում են հայկական հիշողություններ՝ ինչպես օրինակ Սուրբ Գրիգոր Լուսավորչի

Թաղը: Նեապոլում հայերի ներկայությունը թվագրվում է IX դարից: Կլոզին Դը Լա Կրուա-Բենիեն «Բարսեղյան կրոնավորները Իտալիայում. XIII-XV դարեր» հոդվածում խոսում է այն մասին, որ խաչակրաց չորրորդ արշավանքից սկսած (1204) մինչ թուրքերի կողմից Կ. Պոլսի առումն ընկած ժամանակահատվածում իտալական քաղաքներում կարելի էր հանդիպել ինչպես հայ առևտրական, այնպես էլ կղերական համայնքների: Վերջիններս տեղի աշխարհիկ հասարակության կողմից բարեհաճությամբ էին ընդունվում, սակայն լատին հողերը դասը ի դեմս նրանց տեսնում էր իր հակառակորդներին, ինչն էլ պատճառ դարձավ նրանց ձուլմանը մինչ XV դարի վերջը, երբ Արևելքի ու Արևմուտքի միջև հարաբերությունները բավական լարված էին: Վերոհիշյալ համայնքները, որոնք արմատավորվել էին կաթոլիկ հոռմեական հողի վրա, միավորվեցին արևմտյան կենտրոնացված եկեղեցու շուրջ, դարձան «բարսեղյաններ»: Շատ մոտ գտնվելով դոմինիկյան միաբանությանը՝ նրանք հետեցին նրանց ծիսակարգին, սակայն կարողացան պահպանել իրենց ազգային ինքնության մի մասնիկը՝ պատարագի լեզուն հայերենն էր:

Դանիել Կալկանյոն իր հոդվածում անդրադառնում է այն պայմաններին, որոնց շնորհիվ XIII դարի ընթացքում Կիլիկիայից Ջենովա փոխադրված կղերականները կարողացան ունենալ հողակտորներ՝ 1207 թվականին Պոնտեկուրոնեում հոսպիտալ, իսկ Ջենովայի Մուրտեդո թաղամասում 1308 թ.: Աուրբ Բարդուղիմեոս հայոց եկեղեցին հիմնելու համար: Հեզինակի դիտարկումներից գալիս ենք այն եզրակացության, որ այս հաստատությունները որքան Հայաստանի (Կիլիկիայի) և Արևմուտքի միջքաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերությունների, այնքան էլ ազգակցական կապերի արդյունքն են: Կլաուդիա Բոնարդին (Միլանի պոլիտեխնիկում) իր ստվարածավալ փաստաթղթային հարուստ նյութի վրա հիմնված հոդվածում փորձում է տալ միջնադարյան Իտալիայի համեմատաբար խոշոր հայ գաղթօջախների՝ Միլանի, Անկոնայի, Ջենովայի, Վենետիկի պատմամշակութային ու տնտեսական նկարագիրը: Դոնատելա Տավերնան «Պողոս Էրզրումցին և հայկական ներկայությունը Աստիում» հոդվածում ներկայացնում է Աստին, որպես Ջենովայի և Ֆրանսիական Շամպայն դավառի միջև ճանապարհային կարևոր հանգրվան և շուկա, ապա վստահություն է հայտնում, որ չնայած փաստերի բացակայությանը, Աստիում հայ բնակիչներ պետք է լինեին, այլապես միայն Պողոս Էրզրումցու ներկայությունն այստեղ անբացատրելի կլիներ: Այս առիթով նա հանգամանորեն վերլուծում է «Աստիի ժամասացության մատյանը» (Ճաշոց), ցույց տալով XIV դարում այս շրջանի Աստիում հայերի ներկայությունը: Իսկ Ալեսանդրո Օրենզոն (Պիզա) «Լեոնարդո դա Վինչին և Արևելքը» հոդվածում անդրադառնում է Միլանի Ամբրոջյան գրադարանում պահվող Լեոնարդո դա Վինչիի «Կողեքս Ատլանտիկոս» ստեղծագործությանը, որի որոշ աեքստեր, գծագրեր վերաբերում են Հայաստանին: Մասնագետների կողմից մինչ այժմ վիճարկելի է համարվել մեծ արվեստագետի Հայաստանում լինելու փաստը: Մանրամասն քննարկվում են Վինչիից մնացած «հայկական նամակները» ու գծանկարները: Պավել Չորանյանը «Հոռմի հայերեն ձեռագրերի հիշատակարանները. XIII դար»

հողվածում մանրամասն քննարկում է Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները և առաջադրում վարկած, թե 1239-40 թթ. Գանձակից, Սաչենից ու Գետիկից Հռոմում հայանված և ձեռագրեր արտագրող հայ վարդապետները այնտեղ էին ժամանել դիվանագիտական առաքելությամբ, որոնց միջոցով էլ, հավանաբար, Հռոմ էր տարվել հայ և վրաց գործիչների ու, մասնավորապես, Վրաստանի թագուհի Ռուսուդանի ու նրա որդու՝ Դավթի, Հռոմի պապին դրված նամակը ու բերվել նրա պատասխանը Հռոմից 1240 թ.: Ենթադրվում է, թե այդ գործիչների առաքելությամբ սկսված բանակցությունները որոշակի ազդեցություն են թողել հայ-մոնղոլական փոխհարաբերությունների բնույթի և հայ-մոնղոլական պայմանագրի ձևավորման վրա: Հռոմի պապի հրաժարումը՝ օժանդակել հայերին ու վրացիներին մոնղոլների դեմ պայքարում, ստիպել է հայ գործիչներին հաշտության եզրեր փնտրել մոնղոլների հետ, ուստի և ընթացք է ստացել Սմբատ Գունդստաբլի 1246 թ. դեսպանադնացությունը դեպի Կարակորում:

#### 8. Հայ-լատին վարձադրությունը:

Այս բաժնում մանրամասն ներկայացված են Իտալիայի տարբեր քաղաքներում հանդրվանած հայազգի սրբերի համառոտ վարձադրությունները, որոնց բավական հետաքրքիր ուսումնասիրությամբ զբաղվել են Իտալացի մասնագետները: Բաժինը ամփոփում է Բեռնար Ուտիեի (Ֆրանսիա) «Իտալիայի սրբերը և մարտիրոսները հայոց հայսմավուրքում» հոգվածը: Հեղինակը երկու եկեղեցիների մերձեցման ուղղությամբ կատարվող փորձեր է համարում այն հանդամանքը, որ լատին որոշ սրբեր (ս. Լավրենտը, ս. Սիքստը, ս. Օնորե դը Ֆոնդին, Միլանի ս. Ամբրոզիոսը, ս. Բենուան) տեղ են գտել հայկական հայսմավուրքում: Կան անուններ, որոնց լատինական ձևը թաքնված է հայկական զգեստավորման տակ:

#### 9. XVI-XVIII դդ. մշակութային առնչությունները:

Պավել Չորանյանը անդրադառնում է հայկական ուղեգրություններում Հռոմի և Իտալիայի նկարագրություններին: Ներկայացնելով հայ ընթերցողին Արևմուտքի կյանքն իր բազմազանության մեջ, հայ ուղեգիրները Հռոմի և Իտալիական քաղաքների կենցաղի նկարագրության օրինակներով ձգտում էին հայ ժողովրդի մեջ սերմանել սիրո և արդարության գաղափարներ դեպի իրենց իսկ հայրենիքն ու հայրենակիցները, նշել հայ հասարակությունը ևս բարեփոխելու անհրաժեշտությունը՝ վառ պահելու հայրենիքի ազատագրության անհրաժեշտության գաղափարը, սեփական հայրենիքի գերակայության զգացումը տարբեր երկրների նյութական ու բարոյական արժեքներից և այլն: Հայ ճանապարհորդները նկարագրում էին ընդօրինակման արժանի վերաբերմունք հասարակական կյանքի կազմակերպման գործում (օրինապահություն, վիճակագրության օգտագործում, բնակչության բժշկական ձրի սպասարկում, կանանց գրագիտության աստիճանի բարձրացում և այլն), որոնք ամբողջության մեջ պետք է նպաստեին հայ ժողովրդի դոյատևմանն ու հարատևմանը:

Ալեքսանդրո Օրենգոյի հողվածը նվիրված է Իտալիայում հայկական ձեռագրերի ընդօրինակմանը, հայ տպագրության սկզբնավորմանն ու XV-XVIII դարերում հայկական տպարանների գործունեությանը:



Հ. Պողոս Լ. Ջեքիյանը «Մխիթար և Մխիթարյաններ» հոդվածում քննում է Վենետիկում հայ կրոնավորների ներկայության և հայ հոգևոր կյանքի առկայության հանգամանքը մինչև Մխիթար Սեբաստացու այստեղ գալը: Այնուհետև անդրադառնում է Ս. Ղազարում հայկական միաբանության հիմնադրման և XVIII դարի հայոց վերածննդի հարցերին: Հեղինակն անդրադառնում է Մխիթարի և հայոց եկեղեցու փոխհարաբերություններին: Մխիթար Սեբաստացին այս հոդվածում ներկայանում է որպես էկոմենիզմի առաջամարտիկ: Լ. Ջեքիյանը խոսում է նաև Հայ կաթոլիկ պատրիարքարանի հիմնադրման և գործունեության սկզբնական շրջանի մասին, անդրադառնում այն մեծ վաստակին, որ ունեցան Մխիթարյանները հայ մշակույթի և գիտության մեջ:

Շահեն Խաչատրյանը «Այվազովսկին և Իտալիան» հոդվածում անդրադառնում է մեծ ծովանկարչի կյանքում Իտալիայի խաղացած դերին, նեապոլում և Հռոմում նրա ստեղծած կտավներին, Գրիգոր XVI պապի կողմից նրա նկարի ձեռքբերմանը, որն էլ հետագայում Լևոն XIII պապը նվիրեց Ս. Ղազարին:

Ժիրայր Փափազյանը «Տիգրան Չուխաջյանը և Իտալիան» հոդվածում անդրադառնում է Միլանում կրթություն ստացած հայ կոմպոզիտորի «Արշակ Երկրորդ» օպերայի և նրա այլ ստեղծագործությունների վրա իտալական փոխազդեցության հարցերին: Գաբրիելա Ուլուհոջյանը «Դեռ դատո (Աստվածատուր) Փափազյանը, Լևոն XIII-ի տված արտոնությունները ջենովացիներին և Սկևռայի մասնատուփը» հոդվածում ընթերցողի ուշադրությունն է ներկայացնում Աստվածատուր Փափազյանի անձր որպես Սավոլայի արքայական տան կցորդ Բարձր Դուան մոտ, ապա նրա գիտական գործունեությունը Հռոմում, ուր նա ուսումնասիրում էր արքայական այս բնտանիքի ծագումն ու պատմությունը՝ իրենց իսկ խնդրանքով: Այնուհետև նա Սավոլայի ներկայացուցիչն էր Իտալիայի արտաքին գործերի նախարարությունում: Իր գործունեության գագաթնակետը նրան սուրբ Մավրիկիոսի Ղազարի օրդենի ասպետի խաչի շնորհումն էր, որ նա ստացավ, երբ Վենետիկում արքայական կոմիսար-ներկայացուցիչն էր: Ասկայն XIX դարի Իտալիայի կյանքում նրա ակտիվ մասնակցությունն ու եվրոպական քաղաքական շրջանակներում նրա հեղինակավոր ծանոթությունները նրան մոռացնել չտվեցին իր հայկական ծագումը: Նա ուշադրությունից դուրս չէր թողնում և հավաքում էր այն հազվագյուտ արժեքները, որոնք ցիրուցան շրջում էին իտալական քաղաքներում: Հեղինակը հատկապես անդրադառնում է նրա կողմից ձեռք բերված և հրատարակված Կիլիկիայի Լևոն II թագավորի 1288 թ. ջենովացիներին շնորհած արտոնագրին և Ակևռայի թանկարժեք մասնատուփին (էրմիտաժ), որոնք դիտականորեն արժևորվեցին միայն XIX դարի երկրորդ կեսին, երբ դրանցով հետաքրքրվեցին հ. Ղևոնդ Ալիշանն ու Վիկտոր Լանգլուան:

Ալդո Ֆերրարին «Հայերը և Եվրոպան XIX դարում» հոդվածում քննարկում է քաղաքական այն հանգամանքները, որոնք առիթ էին հանդիսանում հայերի համար իրենց ազդային և մշակութային զարգացման հեռանկարը Եվրոպայի և Ռուսաստանի հետ կապելու համար: Այս լույսի ներքո են քննարկվում հայ և եվրոպական մշակույթների փոխհարաբե-

րությունները, Եվրոպայում Հայկական հարցի քննարկման հայեցակետերը: Հեղինակի կարծիքով եկեղեցին XIX դարում կորցնում է իր ազդեցությունը մշակութի վրա: Հեղինակն իր հոգվածում մեծ դեր է տալիս մանկավարժության հարցին և հանգամանորեն քննության առարկա է դարձնում Եվրոպայի և ռուսահայ դպրոցների, ինչպես նաև օսմանյան տիրապետության տակ եղած հայ համայնքների դպրոցների գործունեությունը: Իր հոգվածի վերջին մասը հեղինակը տրամադրել է Հայկական հարցին և Եվրոպայի կողմից նրա ընկալմանը:

10. Առևտրական հարաբերությունները (XVI-XIX դարեր):

Շուշանիկ Խաչիկյանի (Մատենադարան), Էլիզաբեթ Թաջիրյանի (ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ) և Լուչիա Ֆրատարելլի Ֆիշերի (Պիզայի համալսարան) հոգվածներում քննարկվում են հայ առևտրական կապիտալի տեղաշարժը դեպի Եվրոպա (Նոր Զուղա-Վենետիկ-Ջենովա-Լիվոռնո), Եվրոպայում հայկական Շեհրիմանյան, Գերաքյան և այլ նշանավոր առևտրական տների գործունեության հետ կապված հարցեր: Հեղինակներն այս հոգվածներում օգտագործել են Եվրոպական դիվանների հաշիվները փաստագրական նյութը:

11. Եկեղեցական հարաբերությունները (XV-XIX դարեր):

Հարություն Գևորգյանի (Փարիզ) «Հայ եկեղեցին, Վատիկանը և հայ ազատագրական շարժումը. XVI-XVII դդ.» հոգվածում նորոգվում են լուսարանվում հայ ազգային-ազատագրական մտքի ելևէջները և այդ գործում Վատիկանի խաղաղացած գերը:

Մերուժան Կարապետյանը (ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ) «Նախիջևանի Հայ կաթողիկե համայնքը. էթնիկ պատմությունը և էթնոգրաֆիկական գործընթացները XVII-XVIII դարեր» հոգվածում Վատիկանի արխիվների փաստաթղթերի հիման վրա մանրամասն կանգ է առնում Նախիջևանի դավառում մի քանի դար գոյատևած հայ կաթողիկ գյուղերի ընկալության թվաքանակի, մահմեդականացման դործընթացների և արտագաղթի պատմության հարցերին:

Հայ եկեղեցու ծիսական համակարգին ու նրա փոխազդեցություններին են նվիրված Ալֆոնսո Նեցկիի «Հայ ազգը և հայ ծեսը. XVIII դ. Լիվոռնոյին վերաբերող մի քանի հարցեր», Կ. Շառլ Ռենուի «Հայ ծեսի էությունը», Դանիել Ֆնդիկյանի «Լատին ազդեցությունը հայ եկեղեցական արարողակարգի վրա» հոգվածները:

12. Վերջարան:

Վատիկանի Գաղտնի դիվանի գլխավոր արխիվիստ Զուգեպպե Կրոչեն «Պապական ներկայացուցչությունները Կոստանդնուպոլսում, գիվանագիտության և միսիանների միջև» հոգվածում անդրադառնում է Կ. Պոլսում հռոմեական ներկայության պատմությանը, լատին վիկարիատի հիմնադրմանը և հայոց հետ նրա հարաբերություններին, Մեծ եղեռնի տարիներին Պոլսում պապական նվիրակ Դուլչիի գործունեությանը:

Անտոնիա Արսյանի «Իտալիայի հայերը XX դարում» հոգվածը նվիրված է Մեծ եղեռնից հետո Իտալիայում հանգրվանած հայերի պատմությանը, հայ-իտալական մշակութային միությունների ստեղծմանը: Գիյոմ Արալի «Հայերը Իտալիայում» և Ֆրանչեսկո դե Կարիայի «Հայաստա-

նի կոնցեպցիան և հայի կերպարը իտալիայում» հոդվածներում մանրամասն քննարկվում են XIII-XX դարերում իտալիայում ապաստանած հայերի էթնիկ ստերեոտիպերի հարցեր:

Ամփոփելով ասենք, որ ցուցահանդեսի կազմակերպման գաղափարը, ինչպես նաև ժողովածուի հրատարակությունը իրականացրել է Կլոդ Արմեն Մուլթաֆյանը՝ Հարություն Գևորգյանի և Մարի Դյուֆլոյի համագործակցությամբ: Ցուցահանգեսում ներկայացված քարտեզների խմբագրումը կատարել է Բարկեն Հարությունյանը (ԵՊՀ):

Նոր լույս տեսած «Հոռմ-Հայաստան» հատորը նշանակալի ներդրում է ինչպես հայ ժողովրդի պատմության, այնպես էլ հայ-արևմտաեվրոպական հարաբերությունների ուսումնասիրման գործում: Նման հրատարակություններով ցուցահանգեսները փրկվում են մոռացությունից և շարունակում են իրենց գիտամշակութային առաքելությունը, ուստի ցանկալի էր ունենալ նաև նրա հայերեն հրատարակությունը:

ԷԼԻՉԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ